ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

5 հունիսի 2024թ. թիվ 497

Մ.ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ, Վ.ՂԱՐՍԱՅԱՆԻՆ, Վ.ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ,
Ա.ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, Ա.ԴԵՄԻՐՉՅԱՆԻՆ, Վ.ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ,
Ռ.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, Գ.ՔԱՐՀԱՆՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ
ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Գ.Մելիքսեթյանի 05.06.2024թ. զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ն ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Միեր Խեչումյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետներ Վահրամ Ղարսայանին և Վահրամ Դանիելյանին, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արուս Թումանյանին և նույն վարչության գլխավոր մասնագետ Արտակ Դեմիրչյանին, առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Ռուզաննա Պողոսյանին և գլխավոր մասնագետ Վաղարշակ Եղիազարյանին, կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Գարեգին Քարհանյանին, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Արմեն Հակոբյանին ս/թ հունիսի 5-ին մեկ օրով գործուղել ք.Ալավերդի՝ ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների

հետևանքով տեղի ունեցած հեղեղումների առաջացրած արտակարգ իրավիճակի կառավարման որոշ աշխատանքների իրականացման և համակարգման համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

06/06/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. հունիսի 5
ք.Վանաձոր